Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2024 թվականի ապրիլի 16-ի N117-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի ապրիլի 16–ից

«Մինչև 1% cashback Wildberries-ում IDBank-ի քարտով վճարելիս» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 15.04.2024թ-ից 15.06.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** Բանկի կողմից թողարկված ցանկացած քարտ (բիզնես կամ ֆիզիկական անձանց քարտեր), որը արշավի ընթացքում Wildberries հարթակում կկատարի վճարում:
1.3 **Քարտատեր՝** Քարտի քարտապան:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 15.04.2024թ-ից 15.06.2024թ-ը ներառյալ, Բանկի Քարտով Wildberries հարթակում վճարում կատարելու դեպքում Քարտատերերը կստանան մինչև 1% cashback հետևյալ տրամաբանությամբ.

- Visa Rocket քարտերի դեպքում սույն քարտի համար տեղեկատվական ամփոփագրով գործող 0,5% cashback-ին կգումարվի այս արշավի արդյունքում տրամադրվող հավելյալ 0,5% cashback-ը՝ ապահովելով, որ Քարտատերն արշավի շրջանակում ստանա հանրագումարային 1% cashback,
- Բանկի այլ Քարտերի դեպքում՝ 1% cashback:

2.2 Սույն արշավի շրջանակում միևնույն հաճախորդի գծով օրացույցային ամսվա ընթացքում առավելագույն cashback-ի սահմանաչափը 5 000 ՀՀ դրամ է (նախքան հարկումը)՝ անկախ Քարտերի քանակից: Cashback-ը ենթակա է վճարման օրացույցային ամսվան հաջորդող ամսվա մինչև 15-րդ աշխատանքային օրը:

2.3 Վերադարձված գնումների դիմաց cashback չի վճարվում:

2.4 Եթե Բանկի Քարտի տեղեկատվական ամփոփագրով սահմանված է cashback-ի տրամադրման և սպասարկման առավելագույն սահմանաչափ, ապա սույն Արշավի շրջանակում սահմանված

ամսական 5 000 ՀՀ դրամ (նախքան հարկումը) սահմանաչափը հաշվարկվելու է առանձին՝ անկախ տվյալ Քարտի տեղեկատվական ամփոփագրով սահմանված առավելագույն սահմանաչափը:

2.5 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.6 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: